ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ն ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի N22 արձանագրային որոշման պահանջների համաձայն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնը համալրելու համար.

1. Բժիշկ-նյարդաբան – 0.25 դրույք

ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, որը կբավարարի ստորև նշված պահանջներին՝

1) բարձրագույն և հետբուհական կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ,

2) հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն,

3) բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

1) դիմում/լրացվում է տեղում/

2) մեկ լուսանկար 3x4 չափի,

3) տեղեկանք հիմնական աշխատանքի վայրից (համատեղությամբ աշխատանքի անցնելու դեպքում),

4) ինքնակենսագրություն,

5) անձնագրի, բարձրագույն և հետբուհական (ում բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է հետբուհական կրթության պահանջ (ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա)) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները և բնօրինակները,

6) արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դիմումատուի ցանկությամբ,

8) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կծանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի աշխատանքային խմբի կողմից (Կոտայքի մարզ, ք.Բյուրեղավան, 2-դ փողոց, շենք 2), բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10.00 -15.00-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2018 թվականի հուլիսի 18-ը:

Մրցույթը տեղի կունենա 2018թ. հուլիսի 25 - ին «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ- ում, ժամը 12:00-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի աշխատանքային խմբին (հեռ.՝ 0222 6-52-49):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: